



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 սեպտեմբերի 2012 թվականի N 1181 - Ն

ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՆՇԱԳՐՈՒՄԸ, ԳՐԵԼԱՁԵՎՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1938-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

«Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում կիրառվող Չափի և կշռի միջազգային համաժողովի կողմից ընդունված և օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության կողմից երաշխավորված միավորների միջազգային ՄԻ (SI) համակարգի մեծությունների միավորները և չափումների սանդղակները՝

1) մեծությունների միավորների հայերեն անվանումը, նշագրումը և գրեկանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրեկանը և կիրառման կանոնները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) մեծությունների միավորների կիրառման կանոնները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Թույլատրել մեծությունների միավորների միջազգային համակարգի մեծությունների միավորներին համահավասար կիրառման թույլատրված մեծությունների արտահամակարգային միավորները՝ հարաբերակցված միջազգային համակարգի միավորների հետ՝ համաձայն N 4 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի «Մեծությունների միավորների, չափումների սանդղակների անվանումը, նշագրումը, գրելաձևն ու դրանց կիրառման կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի ապրիլի 30-ի N 260 և 1999 թվականի մայիսի 3-ի N 277 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1938-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 25  
Երևան



ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՆՇԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԵԼԱՁԵՎԸ  
 ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Աղյուսակ N 1

Մեծությունը		Միավորը			
անվանումը	չափայնությունը	անվանումը	նշագիրը		սահմանումը
			միջազգային	հայերեն	
1	2	3	4	5	6
Երկարություն	L	մետր	m	մ	Մետրը վակուումում լույսի անցած ճանապարհի երկարությունն է 1/299 792 458 վ ժամանակահատվածում:
Զանգված	M	կիլոգրամ	kg	կգ	Կիլոգրամը հավասար է կիլոգրամի միջազգային նախատիպի զանգվածին:
Ժամանակ	T	վայրկյան	s	վ	Վայրկյանը հավասար է ցեզիում-133 ատոմի հիմնական վիճակի 2 գերնուրբ մակարդակների միջև անցմանը համապատասխանող ճառագայթման 9 192 631 770 պարբերության տևողությանը:
Էլեկտրական հոսանք (էլեկտրական հոսանքի ուժ)	I	ամպեր	A	Ա	Ամպերն էլեկտրական հաստատուն հոսանքի ուժն է, որն անցնելով վակուումում իրարից 1 մ հեռավորության վրա գտնվող իրար զուգահեռ, անվերջ երկար և անվերջ փոքր շրջանաձև լայնական կտրվածքի 2 հաղորդիչներով, առաջ է բերում $2 \cdot 10^{-7}$ Ն փոխազդեցության ուժ՝ նրանցից յուրաքանչյուրի 1 մ երկարության հատվածի վրա:

1	2	3	4	5	6
Ջերմադինամիկական ջերմաստիճան	$\theta$	կելվին	K	Կ	Կելվինը հավասար է ջրի եռակի կետի ջերմադինամիկական ջերմաստիճանի 1/273,16 մասին:
Նյութի քանակ	N	մոլ	mol	մոլ	Մոլը նյութի այն քանակն է, որը պարունակում է այնքան կառուցվածքային տարր, որքան ատոմ է պարունակում 0,012 կգ զանգվածով ածխածին-12-ը ( $6,022 \cdot 10^{23}$ ատոմ):
Լույսի ուժ	J	կանդելա	cd	կդ	Կանդելան աղբյուրի տրված ուղղությամբ լույսի ուժն է, որն արձակում է $5,40 \cdot 10^{12}$ Հգ հաճախականությամբ միագույն ճառագայթում, որի լույսի էներգիական ուժը տվյալ ուղղությամբ կազմում է 1/683 Վտ/սռ:

ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԾԱՆՑՅԱԼ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՇԱԳՐՈՒՄԸ  
ԿԱԶՄՎԱԾ ԵՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՇԱԳՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

Աղյուսակ N 2

Մեծությունը		Միավորը		
անվանումը	չափայնությունը	անվանումը	նշագիրը	
			միջազգային	հայերեն
Մակերես	$L^2$	քառակուսի մետր	$m^2$	$մ^2$
Ծավալ, տարողություն	$L^3$	խորանարդ մետր	$m^3$	$մ^3$
Արագություն	$LT^{-1}$	մետր վայրկյանում	$m/s$	$մ/վ$
Ալիքային թիվ	$L^{-1}$	մետր՝ մինուս մեկ աստիճան	$m^{-1}$	$մ^{-1}$
Արագացում	$LT^{-2}$	մետր՝ բաժանած վայրկյան քառակուսի	$m/s^2$	$մ/վ^2$
Խտություն	$L^{-3} M$	կիլոգրամ՝ բաժանած մետր խորանարդ	$kg/m^3$	$կգ/մ^3$
Տեսակարար ծավալ	$L^3 M^{-1}$	մետր խորանարդ՝ բաժանած կիլոգրամ	$m^3 /kg$	$մ^3 /կգ$
Էլեկտրական հոսանքի խտություն	$L^{-2} I$	ամպեր՝ բաժանած մետր քառակուսի	$A/m^2$	$Ա/մ^2$
Մագնիսական դաշտի լարվածություն	$L^{-1} I$	ամպեր՝ բաժանած մետր	$A/m$	$Ա/մ$
Մոլային խտություն	$L^{-3} N$	մոլ՝ բաժանած մետր խորանարդ	$mol/m^3$	$մոլ/մ^3$
Պայծառություն	$L^{-2} J$	կանդելա՝ բաժանած մետր քառակուսի	$cd/m^2$	$կդ/մ^2$

Մեծությունը		Միավորը			
անվանումը	չափայնությունը	անվանումը	նշագիրը		արտահայտությունը՝ հիմնական և ածանցյալ միավորներով
			միջազգային	հայերեն	
1	2	3	4	5	6
Հարթ անկյուն	1	ռադիան	rad	ռադ	$m \cdot m^{-1} = 1$
Մարմնային անկյուն	1	ստեռադիան	sr	սռ	$m^2 \cdot m^{-2} = 1$
Հաճախականություն	$T^{-1}$	հերց	Hz	Հց	$s^{-1}$
Ուժ	$LMT^{-2}$	նյուտոն	N	Ն	$m \text{ kg } s^{-2}$
Ճնշում	$L^{-1} MT^{-2}$	պասկալ	Pa	Պա	$m^{-1} \text{ kg } s^{-2}$
Էներգիա, աշխատանք, ջերմաքանակ	$L^2 MT^{-2}$	ջոուլ	J	Ջ	$m^2 \text{ kg } s^{-2}$
Հզորություն	$L^2 MT^{-3}$	վատտ	W	Վտ	$m^2 \text{ kg } s^{-3}$
Էլեկտրական լիցք, էլեկտրականության քանակ	TI	կուլոն	C	Կլ	sA
Էլեկտրական լարում, էլեկտրական պոտենցիալ, էլեկտրական պոտենցիալների տարբերություն, էլեկտրաշարժ ուժ	$L^2 MT^{-3} I^{-1}$	վոլտ	V	Վ	$m^2 \text{ kg } s^{-3} A^{-1}$
Էլեկտրաունակություն	$L^{-2} M^{-1} T^4 I^2$	ֆարադ	F	Ֆ	$m^{-2} \text{ kg}^{-1} s^4 A^2$
Էլեկտրական դիմադրություն	$L^2 MT^{-3} I^{-2}$	օհմ	$\Omega$	Օմ	$m^2 \text{ kg } s^{-3} A^{-2}$
Էլեկտրահաղորդականություն	$L^{-2} M^{-1} T^3 I^2$	սիմենս	S	Սմ	$m^{-2} \text{ kg}^{-1} s^3 A^2$
Մագնիսական ինդուկցիայի հոսք, մագնիսական հոսք	$L^2 MT^{-2} I^{-1}$	վեբեր	Wb	Վբ	$m^2 \text{ kg } s^{-2} A^{-1}$

1	2	3	4	5	6
Մագնիսական հոսքի խտություն, մագնիսական ինդուկցիա	$MT^{-2} I^{-1}$	տեսլա	T	Տլ	$kg s^{-2} A^{-1}$
Ինդուկտիվություն, փոխինդուկտիվություն	$L^2 MT^{-2} I^{-2}$	հենրի	H	Հն	$m^2 kg s^{-2} A^{-2}$
Ցելսիուսի ջերմաստիճան	$\Theta$	Ցելսիուսի ջերմաստիճան	$^{\circ}C$	$^{\circ}C$	K
Լուսային հոսք	J	լյումեն	lm	լմ	cd sr
Լուսավորվածություն	$L^{-2} J$	լյուքս	lx	լք	$m^{-2} cd sr$
Ռադիոակտիվ նյութի ակտիվություն	$T^{-1}$	բեքերել	Bq	Բք	$s^{-1}$
Իոնացնող ճառագայթման կլանված բաժնեչափ (դոզա), կերմա	$L^2 T^{-2}$	գրեյ	Gy	Գր	$m^2 s^{-2}$
Իոնացնող ճառագայթման համարժեք բաժնեչափ, իոնացնող ճառագայթման արդյունարար բաժնեչափ	$L^2 T^{-2}$	զիվերտ	Sv	Ջվ	$m^2 s^{-2}$
Կատալիզատորի ակտիվություն	$NT^{-1}$	կատալ	kat	կատ	$mol \cdot s^{-1}$

ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՐԻԹՄԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Աղյուսակ N 4

Մեծությունը անվանումը	Միավորը			
	անվանումը	նշագիրը		արժեքը
		միջազգային	հայերեն	
1	2	3	4	5
1. Հարաբերական մեծություն (մեծության չափագուրկ հարաբերություն որպես ելակետային ընդունված համանուն մեծությանը)՝ ՕԳԳ, հարաբերական երկարացում, հարաբերական խտություն, դեֆորմացիա, հարաբերական դիլեկտրական և մագնիսական թափանցելիություն, բաղադրիչի զանգվածային բաժնեչափ, մոլային բաժնեչափ և այլն)	միավոր	1	1	1
	տոկոս	%	%	$10^{-2}$
	պրոմիլե	‰	‰	$10^{-3}$
	միլիոներորդ մաս	ppm	մլն <sup>-1</sup>	$10^{-6}$
2. Լոգարիթմական մեծություն (տվյալ մեծության և որպես ելակետային ընդունված համանուն մեծության չափագուրկ հարաբերության լոգարիթմը), ձայնային ճնշման մակարդակ, ուժեղացում, թուլացում և այլն	բել	B	Բ	$1B=1 \lg(P_2/P_1)$ , երբ $P_2 = 10 P_1$ , $1B=2 \lg (F_1/F_2)$ , երբ $F_2 = 10 F_1$ , որտեղ՝ $P_1$ -ը, $P_2$ -ը համանուն էներգիական մեծություններ են (հզորություն, էներգիա, էներգիայի խտություն և այլն) $F_1$ -ը, $F_2$ -ը համանուն «ուժային» մեծություններ են (լարում, հոսանքի ուժ, դաշտի լարվածություն և այլն)
	դեցիբել	dB	դԲ	0,1 B



1	2	3	4	5
3. Լոգարիթմական մեծություն (տվյալ մեծության և որպես ելակետային ընդունված համանուն մեծության չափագուրկ հարաբերության լոգարիթմը), ձայնի բարձրության մակարդակ	ֆոն	phon	ֆոն	1 phon-ը ձայնի ուժգնության այն մակարդակն է, որի համար ձայնային ճնշման մակարդակն իրեն հավասար ուժգնության 1000 Hz հաճախականությամբ ձայնի համար հավասար է 1 dB:
4. Լոգարիթմական մեծություն (տվյալ մեծության և որպես ելակետային ընդունված համանուն մեծության չափագուրկ հարաբերության լոգարիթմը), հաճախական տիրույթ	օկտավա	-	օկտ	1 օկտավը հավասար է $\log_2(f_2/f_1)$ , երբ $f_2/f_1 = 2$
	դեկադ	-	դեկ	1 դեկադը հավասար է $\lg(f_2/f_1)$ , երբ $f_2/f_1=10$ , որտեղ $f_1$ -ը և $f_2$ -ը հաճախականություններն են:
5. Լոգարիթմական մեծություն (տվյալ մեծության և որպես ելակետային ընդունված համանուն մեծության չափագուրկ հարաբերության լոգարիթմը), բնական լոգարիթմ	նեպեր	Np	Նպ	1 Np = 0, 8686...B=8, 680 ...dB

ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՄՆԱՊԱՏԻԿ ԵՎ ԲԱԺՆԵՄԱՍԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՆ  
ՈՒ ՆՇԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲԱԶՄԱՊԱՏԿԻՉՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԸ

Աղյուսակ N 5

Տասնապատիկ բազմապատկիչը	Նախաձանցը	Նախաձանցների նշագրերը	
		միջազգային	հայերեն
1	2	3	4
$10^{24}$	իոտա	Y	Ի
$10^{21}$	զետա	Z	Զ
$10^{18}$	էքսա	E	Է
$10^{15}$	պետա	P	Պ
$10^{12}$	տերա	T	Տ
$10^9$	գիգա	G	Գ
$10^6$	մեգա	M	Մ
$10^3$	կիլո	k	կ
$10^2$	հեկտա	h	հ
$10^1$	դեկա	da	դե
$10^{-1}$	դեցի	d	դ
$10^{-2}$	սանտի	c	ս
$10^{-3}$	միլի	m	մ
$10^{-6}$	միկրո	μ	մկ
$10^{-9}$	նանո	n	ն

$10^{-12}$	պիկո	p	պ
$10^{-15}$	ֆեմտո	f	ֆ
$10^{-18}$	ատտո	a	ա
$10^{-21}$	զեպտո	z	զ
$10^{-24}$	իոկտո	y	ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՆՇԱԳՐՈՒՄԸ, ԳՐԵԼԱՁԵՎԸ  
ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

**1. Ջերմաստիճանի չափման սանդղակներ**

ա) Ցելսիուսի սանդղակ

1° C-ն ջրի եռման կետի (100° C) և սառույցի հալման կետի (0° C) ջերմաստիճանների տարբերության 1/100 մասն է.

բ) Կելվինի սանդղակ

Ջերմադինամիկական ջերմաստիճանի չափման միավորը՝ 1 Կելվինը (1 Կ), սահմանում է հարաբերությունների սանդղակ, որն ունի ֆիզիկապես որոշված զերո: Կելվինի սանդղակի գործնական կիրառման համար օգտագործվում է միջազգային գործնական ջերմաստիճանային սանդղակը՝ ՄՋԱ-90, որը ճշտվել է 1989 թվականին՝ Չափի և կշռի միջազգային կոմիտեի որոշմամբ (ՉԿՄԿ).

գ) Ֆարենհայտի սանդղակ

1° F-ն ջրի եռման կետի (212° F) և սառույցի հալման կետի (32° F) ջերմաստիճանների տարբերության 1/180 մասն է:

Սառույցի և անուշադրի խառնուրդի ջերմաստիճանը՝ 0° F, մարդու մարմնի նորմալ ջերմաստիճանը՝ 96° F:  $1^{\circ}F=5/9 \cdot 1^{\circ}C$ :

Ցելսիուսի սանդղակից Կելվինի սանդղակին անցումն իրականացվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$T=t+273,15,$$

որտեղ՝

T-ն ջերմաստիճանն է՝ ըստ Կելվինի սանդղակի,

t-ն ջերմաստիճանն է՝ ըստ Ցելսիուսի սանդղակի:

Ֆարենհայտի սանդղակից Ցելսիուսի սանդղակին անցումն իրականացվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$t=5/9 \cdot (t_F-32),$$

որտեղ՝

t<sub>F</sub>-ը ջերմաստիճանն է՝ ըստ Ֆարենհայտի սանդղակի,

t-ն ջերմաստիճանն է՝ ըստ Ցելսիուսի սանդղակի:

## 2. Կարծրության չափման սանդղակներ

Նյութերի (մետաղների, պլաստմասսայե իրերի, հանքանյութերի (ապարների), ռետինի և այլնի) կարծրությունը բնութագրվում է կարծրության թվով:

ա) Բրինելի սանդղակ  
Սև և գունավոր մետաղների կարծրության չափման սանդղակն է: Կարծրության թիվը՝ HB, ըստ Բրինելի որոշվում է որոշակի P ուժի և այդ ուժի ազդեցության տակ որոշակի D տրամագծով պողպատե գնդիկով (ծայրակալ ինդենթոր) փորձարկվող նմուշի վրա թողած գնդաձև դրոշմահետքի մակերևույթի մակերեսի հարաբերությամբ, հետևյալ բանաձևով՝

$$HB=2P/[\pi D(D-\sqrt{D^2-d^2})]$$

որտեղ՝

HB-ն՝ կարծրության թիվն է,

D-ն՝ պողպատե գնդիկի տրամագիծը, մմ,

P-ն՝ փորձարկվող նմուշի վրա ազդող ուժը, Ն,

d-ն՝ նմուշի մակերեսի վրա գնդիկի արտատիպի տրամագիծը, մմ.

բ) Ռոքվելի սանդղակներ

Ռոքվելի սանդղակները (11 սանդղակ) կիրառվում են մետաղների, պլաստմասսաների կարծրության (HR թիվ) որոշման համար:

Կարծրության՝ HR թիվը, ըստ Ռոքվելի սանդղակների, որոշվում է ստանդարտ ինդենթորով  $P_0$  նախնական և P հիմնական բեռնվածքների ազդեցության տակ նմուշի վրա առաջացած դրոշմահետքերի  $h_0$  և h խորությունների տարբերության գծային ֆունկցիայով:

Մետաղների կարծրության՝ HR թվի չափումը, ըստ Ռոքվելի A( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=588,4\text{Ն}$ ), B( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=980,7\text{Ն}$ ), C( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=1471\text{Ն}$ ) սանդղակների, կատարվում է ստանդարտացված պայմաններում փորձանմուշի մակերևույթի վրա ստանդարտ ինդենթորով (ծայրակալ), երկու հաջորդաբար կիրառվող բեռնվածքների ( $P_0$  և P) ներճնշման ազդեցության տակ նմուշի վրա առաջացած դրոշմահետքերի h և  $h_0$  խորությունների տարբերության գծային ֆունկցիայով:

Որպես ինդենթոր կիրառվում է 1,588 մմ տրամագծով պողպատե կոփված գնդիկ (B սանդղակ), կամ  $120^\circ$  գագաթով ավմաստե կոն (A և C սանդղակներ):

Օրինակ՝ կարծրության թիվն ըստ Ռոքվելի որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$HR(B \text{ սանդղակ}) = 130 - (h - h_0)/c:$$

$$HR(A \text{ և } C \text{ սանդղակներ}) = 100 - (h - h_0)/c,$$

որտեղ՝ fc-ն հաստատուն է և հավասար է 0,002 մմ-ի:

Պլաստմասսայի կարծրությունը որոշվում է P( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=588,4\text{Ն}$ ;  $12,7 \pm 0,015$ մմ տրամագծով պողպատե գնդիկ ինդենթորով), L( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=588,4\text{Ն}$ ;  $6,35 \pm 0,015$ մմ տրամագծով պողպատե գնդիկ ինդենթորով), E( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=980,7\text{Ն}$ ;  $3,175 \pm 0,015$ մմ տրամագծով պողպատե գնդիկ ինդենթորով), M ( $P_0=98,07\text{Ն}$ ;  $P=980,7\text{Ն}$ ;  $6,35$ մմ  $\pm 0,015$  տրամագծով պողպատե գնդիկ ինդենթորով) սանդղակներով.

գ) Վիքերսի սանդղակ

Մետաղների կարծրության չափումը, ըստ Վիքերսի սանդղակի, կայանում է փորձանմուշի մակերևույթի վրա կանոնավոր քառանիստ ալմաստե բուրգի միջոցով (որի 2 հանդիպակաց նիստերի միջև կազմած անկյունը կազմում է 136°) ներճնման մեջ:

Կարծրության HV թիվը, ըստ Վիքերսի սանդղակի, որոշվում է որոշակի ժամանակահատվածում կիրառված ներճնման P-(9,807-980,7Ն) բեռնվածքի և բուրգաձև դրոշմահետքի մակերևույթի մակերեսի հարաբերությամբ:

Կարծրության թվի հաշվարկման բանաձևն է՝

$$HV=0,189P/d^2,$$

որտեղ՝ d-ն դրոշմահետքի հիմքի երկու անկյունագծերի միջինն է, մմ.

դ) Մոոսի սանդղակ

Հանքաքանության մեջ ապարների հարաբերական կարծրությունը գնահատվում է Մոոսի 10 բալային սանդղակով խազման մեթոդով, որը հիմնված է այն բանի վրա, թե սանդղակի ապարներից որոնք են հետազոտվող նմուշի վրա թողնում խազ: Մոոսի սանդղակը հիմնվում է հետևյալ ապարների վրա՝

Ապար	Կարծրության թիվը
Տալկ	1
Գիպս	2
Կալցիտ (կրաքարային սպաթ)	3
Ֆլյուորիտ (ֆտորասպաթ)	4
Ապատիտ	5
Օրթոկլազ (կալիումային դաշտային սպաթ)	6
Քվարց	7
Տոպազ	8
Կորունդ	9
Ալմաստ	10

### 3. Երկրաշարժերի սանդղակներ

Երկրաշարժերի ուժգնությունը չափվում է սեյսմիկ 12 բալային սանդղակով, որը հիմնված է դիտարկվող ավերածությունների և այլ հատկանիշների վրա:

Բալը	Երկրաշարժի անվանումը	Համառոտ բնութագիրը
1	2	3
1	Աննշմարելի	Հայտնաբերվում է միայն սեյսմաչափիչ գործիքներով:
2	Խիստ թույլ	Զգացվում է բացառիկ դեպքերում, հատկապես շենքերի վերին հարկերում, լիակատար հանգիստ վիճակում գտնվող մարդկանց կողմից:
3	Թույլ	Զգացվում է բնակչության փոքրամասնության կողմից՝ անցնող մարդատար մեքենայի առաջացրած թեթև ցնցման ձևով:
4	Չափավոր	Շենքից դուրս զգացվում է քչերի կողմից: Շենքի ներսում զգացվում և դիտվում է մարդկանց մեծամասնության կողմից՝ հատակների ճռոռոցի, կահույքի թրթռոցի, սպասքի, ամանեղենի և պատուհանների ապակիների զնգզնգոցի ձևով: Նման է խորդուրդով փողոցով անցնող բեռնատար մեքենայի առաջացրած ցնցմանը:
5	Բավական ուժեղ	Շենքի թեթևակի ցնցում, կահույքի և կախովի առարկաների ճոճում: Բարակ ճեղքեր՝ ծեփածածկում, ճաքեր՝ պատուհանների ապակիների վրա: Քնած մարդկանցից շատերն արթնանում են:
6	Ուժեղ	Զգում են բոլորը: Պատերից ընկնում են կախված նկարները: Թափվում են ծեփի կտորներ, և թեթև վնասվում են շենքերը:
7	Խիստ ուժեղ	Վատ կառուցված, խարխուլ և հնակառույց տներն զգալի վնասվում են: Քարե, բետոնե և երկաթբետոնե սովորական շենքերի կողմ տարբերում առաջանում են ոչ մեծ ճեղքեր: Չեն վնասվում սեյսմակայուն շենքերը և որակով կառուցված փայտաշեն տները: Գետերում և լճերում դիտվում են ջրի պղտորում և տատանումներ:
8	Քայքայիչ	Փլվում են քարե ամուր ցանկապատերը և գործարանային որոշ ծխնետույզներ: Ժամանակակից կառուցման (սեյսմակայուն) շենքերում առաջանում են զգալի ճեղքեր և չափավոր քայքայումներ: Սովորական շենքերում դիտվում են լուրջ

		քայքայվածություններ և մասնակի փլուզումներ: Ջառիթափ լանջերում և գետնի վրա առաջանում են ճեղքեր: Հուշարձանները տեղաշարժվում կամ տապալվում են:
9	Ավերիչ	Մեյամակայուն շենքերում առաջանում են զգալի վնասվածքներ: Սովորական շենքերում քայքայվածությունը հասնում է մեծ չափերի, դիտվում են մասնակի կամ լրիվ փլուզումներ:
10	Կործանարար	Լավ կառուցված փայտե տները և կամուրջները քայքայվում են: Տեղի է ունենում գետնի ձևախախտում: Խզվում են ինժեներական (ճարտարագիտական) մայրագծերը: Քայքայվում են շենքերն ու հիմքերը, շենքերի մեծ մասը փլուզվում է: Գետնի վրա առաջանում են ճեղքեր, թեք լանջերին՝ սողանքներ և փլուզումներ: Վնասվում են ամբարտակներն ու ջրաթմբերը, ծովում են երկաթգծերը, դիտվում է գետերի և լճերի ջրերի արտացայտում:
11	Աղետալի	Գրեթե բոլոր տները փլվում են, կամուրջների հենարանները խախտվում են: Ամբարտակներն ու ջրաթմբերը փլվում են: Գետնի վրա առաջանում են լայն ճեղքեր՝ հորիզոնական և ուղղահիգ տեղաշարժերով, թեք լանջերին՝ մեծածավալ սողանքներ և փլուզումներ:
12	Խիստ աղետալի	Բոլոր շենքերն ու շինությունները լիակատար փլուզվում են: Գետնի մակերևույթը խիստ փոխվում է, և առաջանում են ալիքներ, հսկայական չափերի են հասնում սողանքներն ու փլուզումները: Գետերը փոխում են հոսանքի ուղղությունը, առաջանում են ջրվեժներ և լճեր:

#### 4. Երկրաշարժերի ինտենսիվության սանդղակներ (մագնիտուդ)

Երկրաշարժերի ինտենսիվության սանդղակը հիմնված է առաձգական ալիքների օջախից ճառագայթող էներգիայի որոշման վրա՝ ըստ սեյսմիկ կայանների դիտարկումների: Մագնիտուդը համեմատական է էներգիայի լոգարիթմին: Երկրաշարժի ինտենսիվության և բալայնության հարաբերակցությունը սահմանելու համար անհրաժեշտ է իմանալ օջախի խորությունը:

#### 5. Քամու ուժի սանդղակ

Քամու արագությունը գնահատվում է 17-բալային համեմատական սանդղակով, որն ընդունվել է միջազգային պայմանագրով (1946 թ.) և ներառում է Բոֆորտի 12-բալային սանդղակը՝ ավելացրած մրրիկի ուժգնության ևս 5 աստիճան:



Բալերը՝ ըստ Բոֆորտի	Արագությունը, մ/վրկ	Քամու բնութագիրը	Քամու ազդեցության նկարագիրը
1	2	3	4
0	0 - 0.2	անդորրություն	Քամու բացարձակ բացակայություն: Ծովը ծխնելույզից բարձրանում է ուղղաձիգ:
1	0.3 - 1.5	խաղաղ	Ծովը ծխնելույզից բարձրանում է ոչ այնքան ուղղաձիգ:
2	1.6 - 3.3	թեթև	Օդի շարժումն զգացվում է դեմքով, տերևները շարժվում են:
3	3.4 - 5.4	թույլ	Տատանվում են տերևներն ու մանր ոստերը, թեթև դրոշները:
4	5.5 - 7.9	մեղմ	Տատանվում են ծառերի բարակ ճյուղերը: Քամին բարձրացնում է ծուխն ու թղթի կտորները:
5	8.0 - 10.7	հով	Տատանվում են մեծ ոստերը: Ջրի վրա հայտնվում են ալիքներ:
6	10.8 - 13.8	ուժեղ	Տատանվում են ծառերի մեծ ճյուղերը:
7	13.9 - 17.1	ավելի ուժեղ	Ջոճվում են փոքր ծառերի բները: Ծովի վրա բարձրանում են փրփրող ալիքներ:
8	17.2 - 20.7	շատ ուժեղ	Կտրվում են ծառերի ճյուղերը: Դժվար է քայլել քամուն հակառակ:
9	20.8 - 24.4	փոթորիկ	Փոքր ավերածություններ: Տեղից պոկվում են ծխնելույզներն ու կղմինդրը:
10	24.5 - 28.4	ուժեղ փոթորիկ	Զգալի ավերածություններ: Ծառերն արմատախիլ են արվում:
11	28.5 - 32.6	սաստիկ փոթորիկ	Լինում են մեծ ավերածություններ:
12	32.7 - 36.9	մրրիկ	Տեղի են ունենում ամայացումներ:
13	37.0 - 41.4	մրրիկ	Տեղի են ունենում ամայացումներ:

14	41.5 - 46.1	մրրիկ	Տեղի են ունենում ամայացումներ:
15	46.2 - 51.1	մրրիկ	Տեղի են ունենում ամայացումներ:
16	51.2 - 55.8	մրրիկ	Տեղի են ունենում ամայացումներ:
17	55.9 և ավելի	մրրիկ	Տեղի են ունենում ամայացումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Առևտրում, դասագրքերում, ինչպես նաև պաշտոնական հրատարակություններում մեծությունների արժեքներն արտահայտվում են Չափի և կշռի միջազգային համաժողովի կողմից ընդունված և օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության կողմից երաշխավորված միավորների միջազգային ՄԻ (SI) համակարգի միավորներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1181-Ն որոշմամբ կիրառման թույլատրված միավորներով, ինչպես նաև դրանցից կազմվող ածանցյալ միավորներով, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1181-Ն որոշմամբ թույլատրված բազմապատկիչների ու նախաձանցների օգտագործմամբ:

2. Չափման միջոցների ստուգաչափման մեթոդիկաներում պետք է նախատեսել ստուգաչափում՝ աստիճանավորված սույն որոշմամբ թույլատրված միավորներով:

3. Արտադրանքի տարբեր տեսակներին վերաբերող նորմատիվային, կառուցաբանական (կոնստրուկտորական), տեխնոլոգիական և այլ տեխնիկական փաստաթղթերում կիրառվում են միավորների միջազգային կամ հայերեն նշագրերը: Անկախ այն հանգամանքից, թե չափման միջոցին վերաբերող փաստաթղթերում ինչ նշագրեր են օգտագործված, չափման միջոցների թվատախտակի, սանդղակների և վահանակների վրա կիրառվում են միավորների միջազգային նշագրերը:

4. Թույլատրվում է պաշտոնական հրատարակություններում կիրառել միավորների միջազգային կամ հայերեն նշագրերը: Մինևույն պաշտոնական հրատարակության մեջ

(բացառությամբ մեծությունների միավորներին վերաբերող հրատարակությունների) չի թույլատրվում 2 տեսակի նշագրերի միաժամանակյա կիրառում:

Արտահանման ենթակա արտադրանքի, այդ թվում՝ չափման միջոցի բնութագրերն ու պարամետրերը կարող են արտահայտվել պատվիրատուի կողմից սահմանված մեծությունների միավորներով:

**ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ  
ՆՇԱԳՐԵՐԸ ԳՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Մեծությունների չափայնությունը գրվում է լատիներեն գլխատառերով՝ ուղիղ տպատառերով:

2. Մեծությունների արժեքները գրելիս կիրառվում են միավորների տառային նշագրերը կամ հատուկ նշաններ (...<sup>0</sup>, ...<sup>?</sup>, ...<sup>...</sup>), ընդ որում, սահմանվում է տառային նշագրերի 2 տեսակ՝ միջազգային (լատինական կամ հունական տառերով) և հայերեն (հայկական այբուբենի տառերով):

3. Մեծությունների միավորների տառային նշագրերը տպագրվում են ուղիղ տառատեսակով: Միավորների նշագրերում կետը, որպես կրճատման նշան, չի դրվում:

4. Մեծությունների միավորների նշագրերը գրվում են մեծությունների թվային արժեքից հետո մեկ տողի վրա (առանց տողադարձի): Թվային արժեքը, որը թեք գծով կոտորակ է և գրված է միավորի նշագրից առաջ, պետք է գրել փակագծի մեջ: Արժեքի վերջին թվանշանի և միավորի նշագրերի միջև պետք է թողնել բացակ, որը պահպանվում է սովյալ տիպի ու չափի տառատեսակների համար՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
100 kW; 100 կՎտ	100kW; 100կՎտ
80 %	80%
20 °C	20°C
(1/60) s <sup>-1</sup>	1/60/ s <sup>-1</sup>

Բացառություն են կազմում հատուկ նշանի տեսքով տողից վերև բարձրացված նշագրերը, որոնց առջև բացատ չի թողնվում

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
20 <sup>0</sup>	20 <sup>0</sup>

5. Մեծության թվային արժեքի մեջ տասնորդական կոտորակի առկայության դեպքում միավորի նշագիրը գրվում է բոլոր թվանշաններից հետո՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
423,06 m; 423,06 մ	423m 0,6; 423 մ, 06
5,758 <sup>0</sup> կամ 5 <sup>0</sup> 45,48 կամ 5 <sup>0</sup> 4528,8"	5 <sup>0</sup> ,758 կամ 5 <sup>0</sup> 45,48 կամ 5 <sup>0</sup> 4528,8

6. Մեծությունների միավորների արժեքները սահմանային շեղումներով նշելիս՝ սահմանային շեղումները վերցվում են փակագծերի մեջ, իսկ միավորի նշագիրը դրվում է փակագծից հետո, ինչպես նաև և թվային արժեքից հետո և սահմանային շեղումից հետո՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
(100,0 ± 0,1) kg; (100,0 ± 0,1) կգ	100,0 ± 0,1kg; 100,0 ± 0,1կգ
50 g ± 1 g; 50 գ ± 1 գ	50 ± 1 g; 50 ± 1 գ

Եթե շարադրանքում նշվում են մի շարք թվային արժեքներ, որոնք արտահայտված են մեծության միևնույն միավորով, ապա այդ միավորի նշագիրը դրվում է միայն վերջին թվանշանից հետո (օրինակ՝ 5,9; 8,5; 10,0; 12,0 մմ), իսկ եթե անհրաժեշտ է նշել մեծության արժեքների տիրույթը, ապա միավորի նշագիրը դրվում է վերջին թվանշանից հետո (օրինակ՝ 5-ից մինչև 20 կգ):

7. Բանաձևերում մեծությունների միավորների նշանակումները բացատրելիս՝ թույլատրվում է կիրառել միավորների նշագրերը: Միավորների նշագրերի տեղադրումը նույն տողի վրա, բանաձևի հետ, որը տառերի տեսքով արտահայտում է միավորների միջև կամ դրանց թվային արժեքների միջև կախվածությունը, չի թույլատրվում

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
v=3,6 s/t , որտեղ՝ v-ն արագությունն է, կմ/ժ s-ը՝ ճանապարհն է, մ t-ն՝ ժամանակը, վ	v=3,6 s/t կմ/ժ, որտեղ՝ s-ը՝ ճանապարհն է, մ t-ն՝ ժամանակը, վ

8. Արտադրյալի մեջ մտնող միավորների տատային նշագրերն իրարից բաժանվում են կետերով, որպես բազմապատկման նշաններ: Թույլատրվում է արտադրյալի մեջ մտնող միավորների տատային նշագրերն իրարից բաժանել բացակներով, եթե դա չի հանգեցնում թյուրիմացության՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
N · m; Ն.մ	Nm, Նմ
A · m <sup>2</sup> ; Ա.մ <sup>2</sup>	Am <sup>2</sup> , Ամ <sup>2</sup>
Pa · s; Պա·վ	Pas, Պավ

9. Միավորների տատային նշագրերի հարաբերության դեպքում որպես բաժանման նշան դրվում է հորիզոնական կամ թեք գիծ: Թույլատրվում է դա նշել արտադրյալի տեսքով՝ աստիճան բարձրացված (դրական կամ բացասական)՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
W·m <sup>-2</sup> ·K <sup>-1</sup> ; Վտ·մ <sup>-2</sup> ·Կ <sup>-1</sup>	W/m <sup>2</sup> /K ; Վտ/մ <sup>2</sup> /Կ
$\frac{W}{\text{վՏ}}$ ;	$\frac{W}{\text{վՏ}}$ ; $\frac{\text{վՏ}}{\text{վՏ}}$
m <sup>2</sup> K	m <sup>2</sup> մ <sup>2</sup>
մ <sup>2</sup> ·Կ	_____      _____
	K                      Կ

10. Թեք գիծը որպես բաժանման նշան օգտագործելու դեպքում միավորների նշագրերը համարիչում և հայտարարում գրվում են նույն տողում, միավորների նշագրերի արտադրյալը հայտարարում վերցվում է փակագծերի մեջ.

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
m/s ; մ/վ	m/s ; մ/վ
W/(m·K) ; Վտ/(մ·Կ)	W/m·K ; Վտ/մ·Կ

11. Մեծության ածանցյալ միավորը նշելիս, եթե դա բաղկացած է 2 կամ ավելի միավորներից, չի թույլատրվում տատային նշագրերն ու միավորների անվանումները համակցել, այսինքն՝ գրել միավորներից մեկի նշագիրը, իսկ մյուսի անվանումը՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
80 կմ/ժ	80 կմ/ժամ
80 կիլոմետր ժամում	80կմ ժամ

12. Թույլատրվում է կիրառել հատուկ նշանների՝...<sup>0</sup>, ...; ...» , % և ‰ համակցումը միավորների նշագրերի հետ, օրինակ՝ ...0/՝:

13. Ժամանակի (րոպե, ժամ, օր), հարթ անկյան (աստիճան, րոպե, վայրկյան), զանգվածի (ատոմային) միավորների անվանումն ու նշագրերը չեն թույլատրվում օգտագործել նախաձանցով:

14. Նախաձանցը կամ դրա նշագիրը գրվում է միավորի անվանման կամ նշագրի հետ միասին, օրինակ՝

<u>ճիշտ է</u>	<u>սխալ է</u>
կիլոպասկալ-վայրկյան/մետր	Պասկալ-կիլովայրկյան/մետր
kPa. s/m ; կՊա . վ/մ	Pa.k. s/m; Պա.կ.վ/մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2012 թվականի  
սեպտեմբերի 13-ի N 1181 - Ն որոշման

ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ՝ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Մեծության անվանումը	Արտահամակարգային միավորը				
	Անվա- նումը	նշագիրը		արտահայտությունը միավորների միջազգային համակարգի միավորներով	կիրառման ոլորտը
		Միջազ- գային	հայերեն		
1	2	3	4	5	6
Ջանգված	տոննա	t	տ	$1 \times 10^3 \text{ kg}$	բոլոր ոլորտներում
	զանգվածի ատոմային միավոր	u	զ.ա.մ.	$1,6605402 \times 10^{-27} \text{ kg}$ (մոտավոր)	ատոմային ֆիզիկա, քիմիա, բնագիտություն
	ֆունտ	f	ֆ	0,453592 kg (մոտավոր)	առևտրի ոլորտ
	կարատ	-	կար	$2 \times 10^{-4} \text{ kg}$ (ճշգրիտ)	թանկարժեք քարերի ոլորտ
	գրամ	g	գ	$10^{-3} \text{ kg}$	բոլոր ոլորտներում
	ցենտներ	q	ց	100 kg	
Ժամանակ	րոպե	min	րոպե	60 s	բոլոր ոլորտներում
	ժամ	h	ժ	3600 s	
	օր	d	օր	86400 s	
Հարթ անկյուն	աստիճան	... °	...°	$(\pi/180)\text{rad} = 1,745329... \times 10^{-2} \text{ rad}$	բոլոր ոլորտներում
	րոպե	...	...	$(\pi/10800)\text{rad} = 2,908882... \times 10^{-4} \text{ rad}$	
	վայրկյան	...''	...»	$(\pi/648000)\text{rad} = 4,848137... \times 10^{-6} \text{ rad}$	
	գրադ (գոն)	gon	գրադ	$(\pi/200)\text{rad} = 1,57080... \times 10^{-2} \text{ rad}$	երկրաբաշխություն
Ծավալ, տարողություն	լիտր	l	լ	$1 \times 10^{-3} \text{ m}^3$	բոլոր ոլորտներում
	գալոն (անգլ.) գալոն (ամեր.)	gal gal	գալ գալ	$4,546 \times 10^{-3} \text{ m}^3$ $3,785 \times 10^{-3} \text{ m}^3$	բոլոր ոլորտներում



	բարել	barrel	բարել	1 նավթային բարելը = = 0,15899 մ <sup>3</sup> = = 158,99 լ	նավթարդյունաբերություն
Երկարություն	աստղագիտական միավոր	ua	ա. մ.	1,49598 x 10 <sup>11</sup> m (մոտավոր)	աստղագիտություն
	լուսային տարի	ly	լուս. տարի	9,4605 x 10 <sup>15</sup> m (մոտավոր)	
	պարսեկ	pc	պկ	3,0857 x 10 <sup>16</sup> m	
	անգստրեմ	Å	անգստրեմ	1 x 10 <sup>-10</sup> m	ֆիզիկա, քիմիա, բնագիտություն
	իքս միավոր	X	իքս-մ	1,00206 x 10 <sup>-13</sup> m (մոտավոր)	
	միկրոն	m	մկ	1 x 10 <sup>-6</sup> m	բոլոր ոլորտներում
	դյույմ	inch	դյույմ	25.4 x 10 <sup>-3</sup> m	
	ծովային մղոն	n mile	ծ.մղ.	1852 m (ճշգրիտ)	ծովային նավագնացություն և օդագնացություն
Երկարություն (ուղղաձիգ)	ֆուտ	ft	ֆուտ	0,3048 m	օդագնացություն
Օպտիկական ուժ	դիօպտրիա		դպտր	1 m <sup>-1</sup>	օպտիկա
Մակերես	բարն	b	բ	1 x 10 <sup>-28</sup> m <sup>2</sup>	ֆիզիկա
	հեկտար	ha	հա	1 x 10 <sup>4</sup> m <sup>2</sup>	գյուղատնտեսություն, անտառատնտեսություն, շինարարություն
	ար	a	ա	100 m <sup>2</sup>	
Էներգիա	էլեկտրոն-վոլտ	eV	էՎ	1,60218 x 10 <sup>-19</sup> J (մոտավոր)	ֆիզիկա
	կիլովատտ-ժամ	kW × h	կվտգժ	3,6 x 10 <sup>6</sup> J	կենցաղ, արդյունաբերություն, (էլեկտրաէներգիայի հաշվիչներ)
Էլիվ հզորություն	վոլտ-ամպեր	V × A	Վ × Ա		էլեկտրատեխնիկա
Ռեակտիվ հզորություն	վար	var	վար		
Էլեկտրական լիցք	ամպեր-ժամ	Ազհ	Ազժ	3,6 x 10 <sup>3</sup> C	էլեկտրատեխնիկա
Ջերմաստիճան	ֆարենհայտ	°F	°Ֆ	° F=5/9°C	
Տեղեկատվության քանակ	բիթ	bit	բիթ	1	տեղեկատվության հաղորդման և թվային մշակման սարքավորումներում
	բայթ	B (byte)	Բ (բայթ)	1 Բայթ= 8 բիթ 1 ԿԲ =1024 Բայթ 1 ՄԲ = 1024 ԿԲ 1 ԳԲ= 1024 ՄԲ	
Տեղեկատվության հաղորդման արագություն	բող	baud	բող	1 բող = 1 բիթ/վ	
Գծային խտություն	տեքս	tex	տեքս	1 x 10 <sup>-6</sup> kg/m (ճշգրիտ)	մանածագործական արդյունաբերություն

Արագություն	հանգույց	kn	հանգ.	0,514(4) m/s	ծովային և օդային նավագնացություն
Արագացում	գալ	Gal	Գալ	0,01 m/s <sup>2</sup>	մեխանիկա
Պտտման հաճախություն	պտույտ վայրկյանում	r/s	պտ/վ	1s <sup>-1</sup>	Ֆիզիկա, էլեկտրատեխնիկա
	պտույտ րոպեում	r/min	պտ/րոպ	(1/60)s <sup>-1</sup> = 0,016(6)s <sup>-1</sup>	
Ուժ, կշիռ	դին	dyn	դին	1 x 10 <sup>-5</sup> N	Ֆիզիկա
	կիլոգրամ-ուժ	kgf	կգուժ	9,80665 x N (ճշգրիտ)	
	պոնդ	p	-	9,80665 x 10 <sup>-3</sup> N (ճշգրիտ)	
	տոննա-ուժ	tf	տուժ	9806,65 N (ճշգրիտ)	
Ճնշում	բար	bar	բար	1 x 10 <sup>5</sup> Pa	Ֆիզիկայի, օդագնացության և այլ ոլորտներ ֆիզիկա
	կիլոգրամ-ուժ քառակուսի սանտիմետրի վրա	kgf/cm <sup>2</sup>	կգուժ/սմ <sup>2</sup>	98066,5 Pa (ճշգրիտ)	
	կիլոպոնդ քառակուսի սանտիմետրի վրա	kp/cm <sup>2</sup>	-	98066,5 Pa (ճշգրիտ)	
	միլիմետր ջրի սյուն	mm H <sub>2</sub> O	մմ ջր.ս.	9,80665 Pa (ճշգրիտ)	
	միլիմետր սնդիկի սյուն	mm Hg	մմ սնդ.ս.	133,332 Pa	
	տորր	Torr	-	133,332 Pa	
Աշխատանք, էներգիա	էրգ	erg	էրգ	1 x 10 <sup>-7</sup> J	
Դինամիկական մածուցիկություն	պուազ	P	Պ	0,1Pa x s	
Կինեմատիկական մածուցիկություն	ստոքս	St	Ստ	1 x 10 <sup>-4</sup> m <sup>2</sup> /s	
Տեսակարար էլեկտրական դիմադրություն	Օհմ միլիմետր քառակուսի մետրի վրա	Ω mm <sup>2</sup> /m	Օմ × մմ <sup>2</sup> /մ	1 x 10 <sup>-6</sup> Ωm	Ֆիզիկա, ատոմային էներգետիկա, ատոլջապահություն
Մագնիսական հոսք	մաքսվել	Mx	Մքս	1 x 10 <sup>-8</sup> Wb	
Մագնիսական ինդուկցիա	գաուս	Gs	Գս	1 x 10 <sup>-4</sup> T	
Մագնիսաշարժ ուժ, մագնիսական պոտենցիալների տարբերություն	գիլբերտ	Gb	Գբ	(10/4π) A= =0,795775 A	
Մագնիսական դաշտի լարվածություն	էրստեդ	Oe	էր	(10 <sup>3</sup> /4 π)A/m= =79,5775A/m	
Ջերմաքանակ, ջերմադինամիկական պոտենցիալներ (սերքին)	կալորիա (միջազգային)	cal	կալ	4,1868 J (ճշգրիտ)	
	ջերմաքիմիական կալորիա	calth	կալթ	4,1840 J (մոտավոր)	

Էներգիա, Էնտալպիա, ազատ էներգիա և այլն), ֆազային փոխակերպման ջերմություն, քիմիական ռեակցիայի ջերմություն	15 աստիճանանոց կալորիա	cal15	կալ15	4,1855 J (մոտավոր)	
Իոնացնող ճառագայթման կլանված բաժնեչափ, կերմա	ռադ	rad, rd	ռադ	0,01Gy	
Իոնացնող ճառագայթման համարժեք բաժնեչափ, իոնացնող ճառագայթման արդյունարար բաժնեչափ	րէո	rem	րէո	0,01Sv	
Ֆոտոնային ճառագայթման էքսպոզիցիոն բաժնեչափ (գամմա և ռենտգենյան ճառագայթման էքսպոզիցիոն բաժնեչափ	ռենտգեն	R	Ռ	$2,58 \times 10^{-4} \text{C/kg}$ (ճշգրիտ)	
Ռադիոակտիվ կյուրի ակտիվություն	կյուրի	Ci	Կի	$3,7 \times 10^{10} \text{Bq}$ (ճշգրիտ)	
Պտույտի անկյուն	պտույտ	r	պտ	$2 \text{ ռադ} = 6,28 \text{ rad}$	Ֆիզիկա, ատոմային էներգետիկա, ատոլջապահություն
Մագնիսաշարժ ուժ, մագնիսական պոտենցիալների տարբերություն	ամպեր-գալար	At	ագ	1A	
Պայծառություն	նիտ	nt	նտ	$1 \text{ cd/m}^2$	

Թույլատրվում է արտահամակարգային միավորները կիրառել առանց ժամկետի սահմանափակման՝ մինչև դրանց մասին միջազգային համապատասխան որոշումների ընդունումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

